# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, (0235)63311,
mrgavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 հունիսի 2017թվականի N 17

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով հաստատել Մրգավետ համայնքի թիվ 6-րդ նիստի հետևյալ օրակարգը`

Մրգավետ համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2017թվականի N 18-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է`

Համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը

Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել 2130000/երկու միլիոն մեկ հարյուր երեսուն հազար/դրամ ծնողական գումար:

Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը

1.Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացրած 2130000/երկու միլիոն մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ հատկացնել 09.01.01.51/նախադպրոցական ուսուցում/ գործառնական դասակարգման 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություն/հոդվածին, որը նախատեսել որպես սննդի գումար:

2.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 150000/մեկ հարյուր հիսուն հազար/դրամ տեղափոխել 10.07.01.54/ սոց. անապահով անձանց աջակցություն/ գործառնական դասակարգման 4726/թաղման ծախսեր/ հոդվածին:

3.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 165000/մեկ հարյուր վաթսունհինգ հազար /դրամ հատկացնել ֆոնդային բյուջեին:

Ֆոնդային բյուջեին ավելացած 165000/մեկ հարյուր վաթսունհինգ հազար/ դրամից

ա/50000/հիսուն հազար/դրամ հատկացնել 01.01.01.52/վարչական օբյեկտների հիմնանորոգում/գործառնական դասակարգման 5134 նախագծահետազոտական ծախսեր/հոդվածին:

բ/ 115000 /մեկ հարյուր տասնհինգ հազար/դրամ հատկացնել 01.01.01.51/կառավարման մարմնի պահպանում/ գործառնական դասակարգման 5122/այլ մեքենաներ և սարքավորումներ/հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ՔԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՏՈՒԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ